# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 46

### ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին օրենքի" 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

1.,,Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանի աշխատակազմ,, համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին

2. Իջևան քաղաքի թիվ 1, թիվ 5 և թիվ 8 մանկապարտեզների կանոնադրությունները հաստատելու մասին

3.Իջևան համայնքի վարչական տարածքում գտնվող բնակելի կառուցապատման հողամասերի համայնքային սեփականություն ճանաչելու մասին

4.Քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու,ինքնակամ շինությունների և ինքնակամ օգտագործող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին

5. Համայնքի սեփականություն հանդիսացող Բլբուլյան փողոցի թիվ 80 շենքի թիվ 12 բնակարանը անհատույց օտարելու մասի

6.Իջևան քաղաքային համայնքի ավագանու 18.06.2018թ թիվ 28 որոշման և թիվ 30 որոշման աղյուսակի մեջ փոփոխություններ կատարելու մասին

7. Համայնքապետարանի համար ծառայողական մեքենա ձեռք բերելու մասին

8. Իջևան քաղաքում 2019թ Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոնակատարությունների ծրագրի հաստատման մասին

9. Իջևան համայնքի 2018թ բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՐԴԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 47Ա

## ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

1.Հաստատել ,,Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանի աշխատակազմ,, համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը:

2.Ուժը կորցրած ճանաչել Իջևան համայնքի ավագանու 20 մայիսի 2015թ թիվ 23 որոշման 1-ին կետը՝ Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՐԴԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 48

## ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1,ԹԻՎ 5 ԵՎ ԹԻՎ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի թիվ 1, թիվ 5 և թիվ 8 մանկապարտեզների կանոնադրություններում կատարվել են փոփոխություններ և անհրաժեշտություն է առաջացել հաստատել այդ մանկապարտեզների նոր կանոնադրությունները:

Ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի թիվ 18 հոդվածի 28-րդ կետի պահանջներով

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել Իջևան քաղաքի թիվ 1 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը /կցվում է/:

2. Հաստատել Իջևան քաղաքի թիվ 5 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը /կցվում է/:

3. Հաստատել Իջևան քաղաքի թիվ 8 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը /կցվում է/:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՐԴԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 49

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Երևանյան փողոցում գտնվող 341.35քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0098-0002/, Ուսանողական փողոցում գտնվող 50.6քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0154-014/ և Նար-Դոսի փողոցում գտնվող 500.0քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0049-0004/ հողամասերը կադաստրային քարտեզում արտացոլված են, որպես ֆիզիկական անձանց պատկանող բնակելի կառուցապատման հողամաս, սակայն որևէ անձի անվամբ հաշվառված չեն և դրանց նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք գրանցված չեն:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Երևանյան փողոցում գտնվող 341.35քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0098-0002/, Ուսանողական փողոցում գտնվող 50.6քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0154-014/ և Նար-Դոսի փողոցում գտնվող 500.0քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0049-0004/ հողամասերի նկատմամբ Իջևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուն:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՐԴԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջեվան, (0263)42138 ijevancity@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 50

## ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով օրենքով սահմանված կարգով՝ աճուրդային,մրցութային և ուղղակի կարգով հողամասերիհատկացնելու մասին: Ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի և ՀՀ ,,Հողային օրենսգրքի,; 3-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի.

| հհ | Նպատակը | Հասցե | Մակերեսը/քմ |
|---|---|---|---|
| 1 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 2x24.0 |
| 2 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 30.0 |
| 3 | Հասարակական կառուցապատում /ինք. խանութ/ | Երևանյան փ. | 53.8հող/51.72շին |
| 4 | Բնակելի կառուցապատում /ինք. տնտ.շին./ | Ազատամարտիկների փ. | 17.0հող/17.0շին |
| 5 | Ընդհանուր օգտագործում | Բլբուլյան փ. | 51.0 |
| 6 | Ընդհանուր օգտագործում | Ա. Մելիքբեկյան փ. | 49.3 |
| 7 | Բնակելի կառուցապատում /ինք. բն. տուն/ | Անկախության փ. | 38.07հող/96.56 շին |
| 8 | Ընդհանուր օգտագործում | Ղարագյոզյան փ. | 102.0 |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 475.5 |
| 10 | Գյուղատնտեսական նշանակության | Արցախյան փ. | 398.5 |
| 11 | Հասարակական կառուցապատում | Արցախյան փ. | 360.6 |
| 12 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 19.8 |
| 13 | Հասարակական կառուցապատում | Վալանսի փ. | 63.0 |
| 14 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 91.35 |
| 15 | Բնակելի կառուցապատում | Նար-Դոսի փ. | 500.0 |
| 16 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 90.0 |
| 17 | Ընդհանուր օգտագործում | Սպանդարյան փ. | 19.8 |
| 18 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 665.86 |
| 19 | Ընդհանուր օգտագործում | Անկախության փ. | 84.0 |
| 20 | Ընդհանուր օգտագործում | Աբովյան փ. | 24.0 |
| 21 | Ընդհանուր օգտագործում | Ռիսանողական փ. | 707.2 |
| 22 | Ընդհանուր օգտագործում | Բլբուլյան փ. | 19.8 |
| 23 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտոտ./ | Բլբուլյան փ. | 31.98հող/31.98շին |
| 24 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտոտ./ | Մետաղագործների փ. | 27.6հող/21.6շին |
| 25 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտոտ./ | Անկախության փ. | 21.4հող/21.4շին |
| 26 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտոտ./ | Անկախության փ. | 24.3հող/24.3շին |
| 27 | Բնակելի կառուցապատում /ինք. տնտ շին./ | Բլբուլյան փ. | 52.35հող/52.35շին |
| 28 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտոտ./ | Բլբուլյան փ. | 31.1հող/31.1շին |
| 29 | Ընդհանուր օգտագործում | Բլբուլյան փ. | 47.8 |
| 30 | Ընդհանուր օգտագործում | Անկախության փ. | 26.35 |
| 31 | Ընդհանուր օգտագործում | Մայիսի 28-ի փ. | 18.0 |

| | | | |
|---|---|---|---|
| 32 | Ընդհանուր օգտագործում | Անկախության փ. | 162.3 |
| 33 | Հասարակական կառուցապատում /ինք. ատիճ./ | Երևանյան փ. | 11.54հող/11.54շին |
| 34 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ | 19.0 |
| 35 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ | 15.0 |
| 36 | Հասարակական կառուցապատում | Աբովյան փ | 250.0 |
| 37 | Հասարակական կառուցապատում | Աբովյան փ | 50.9 |
| 39 | Բնակելի կառուցապատում | Սպանդարյան փ. | 192.0 |
| 40 | Ընդհանուր օգտագործում | Սպանդարյան փ. | 493.0 |
| 41 | Բնակելի կառուցապատում /ինք. տնտ.շին./ | Մետաղագործների փ. | 1606.5հող/578.92շին |
| 42 | Բնակելի կառուցապատում /ինք. տնտ.շին./ | Մետաղագործների փ. | 1415.6հող/378.48շին |
| 43 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտոտ./ | Նալբանդյան փ. | 217.7հող/41.72շին |
| 44 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 2220.3 |

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՐԴԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 51

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԼԲՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 80 ՇԵՆՔԻ ԹԻՎ 12 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 80 շենքի թիվ 12 բնակարանը հանդիսանում է համայնքային սեփականություն: Հիմք ընդունելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ բնակարանի կարգապահ վարձակալ են հանդիսանում Ֆելիքս Հրանտի Ղալթախյանը և Գոհար Շամիրի Բոզինյանը, որոնք ժամանակին չեն կարողացել սեփականաշնորհել բնակարանը:

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 80 շենքի թիվ 12 բնակարանը, որը հանդիսանում է համայնքային սեփականություն, անհատույց օտարել Ֆելիքս Հրանտի Ղալթախյանին և Գոհար Շամիրի Բոզինյանին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՐԴԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 52

## ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.06.2018Թ. ԹԻՎ 28 ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԹԻՎ 30 ՈՐՈՇՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան քաղաքային համայնքի ավագանու 18.06.2018թ <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխությանը համաձայնություն տալու մասին>> թիվ 28 որոշման մեջ և թիվ 30 որոշման աղյուսակի 2-րդ կետում տեղի է ունեցել տեխնիկական անճշտություն, մասնավորապես ,,Ա. Մելիքբեկյան փողոց,, բառերի փոխարեն գրվել է ,,Աբովյան փողոց,, բառերը:

Հաշվի առնելով վերոգրյալը և համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

1. Իջևանի համայնքի ավագանու 18.06.2018թ ,,Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխությանը համաձայնություն տալու մասին,, թիվ 28 որոշման մեջ ,,Իջևան քաղաքի Աբովյան փողոցի 10 հասցեի շինությանը կից,, բառերի փոխարեն կարդալ՝ ,,Իջևան քաղաքի Ա. Մելիքբեկյան փողոցի 10 հասցեի շինությանը կից,, բառերը:
2. Իջևանի համայնքի ավագանու 18.06.2018թ թիվ 30 որոշման աղյուսակի 2-րդ կետում ,,Աբովյան փողոց,, բառերի փոխարեն կարդալ՝ ,,Ա. Մելիքբեկյան փողոց,, բառերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՐԴԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 53

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքը իր բազմաբնույթ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներով առնչվում է ինչպես հարևան համայնքների, այնպես էլ հանրապետական բազմաթիվ կառավարական մարմինների ու միջազգային կազմակերպությունների հետ:

Անհրաժեշտություն է առաջացել համայնքապետարանի համար ձեռք բերել ծառայողական ավտոմեքենա:

Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համայնքապետարանի համար ձեռք բերել ծառայողական ավտոմեքենա ,,Տոյոտա Քամրի,, մակնիշի, մինչև 3,8 մլն ՀՀ դրամ արժողությամբ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՐԴԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 54

## ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ 2019Թ ԱՄԱՆՈՐՅԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ քաղաքապետարանը 2019թ. Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոնակատարությունները նախատեսել է անցկացնել դեկտեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 30-ը ներառյալ: Միջոցառումներին ընդգրկված են քաղաքի հանրակրթական դպրոցների, արվեստի և երաժշտական դպրոցների սովորողներ, համույթներ և քաղաքի մանկապարտեզների սաները: Նախատեսվում է դեկտեմբերի 29-ին մայրաքաղաքից հրավիրված երգիչ-երգչուհիների մասնակցությամբ կազմակերպել տոնական համերգ, այնուհետև՝ հրավառություն:

Ամանորյա նվերներ կհանձնվեն Իջևանի հանրակրթական դպրոցների 1-4 դասարանների, մանկապարտեզների, նախակրթարանների, ,,Հույսի կամուրջ", ՍՕՍ մանկական գյուղ հաճախող երեխաններին:
Նախատեսվում է դրամական օգնություն տրամադրել զոհված ազատամարտիկների ընտանիքներին:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել քաղաքապետարանի 2019թ. Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոնակատարությունների ծրագիրը /կցվում է/:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՐԴԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**

ՆԱԽԱՀԱՇԻՎ
2019թ Ամանորյա և Սուրբ Ծննդյան
համաքաղաքային տոնակատարության միջոցառման

| Հ/Հ | Կազմակերպություն | քանակ | միավորի արժեք | Գումար/դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Թիվ 1 դպրոց /Ամանորյա նվեր | 280 | 510 | 142800 |
| 2 | Թիվ 3 դպրոց /Ամանորյա նվեր | 303 | 510 | 154530 |
| 3 | Թիվ 4 դպրոց /Ամանորյա նվեր | 193 | 510 | 98430 |
| 4 | Թիվ 5 դպրոց /Ամանորյա նվեր | 440 | 510 | 224400 |
| 5 | Թիվ 1 մանկապարտեզ/ Ամանորյա նվեր | 175 | 510 | 89250 |
| 6 | Թիվ 5 մանկապարտեզ /Ամանորյա նվեր | 127 | 510 | 64770 |
| 7 | Թիվ 8 մանկապարտեզ/Ամանորյա նվեր | 102 | 510 | 52020 |
| 8 | «Էվրիկա» զարգացման կենտրոն/Ամանորյա նվեր | 50 | 510 | 25500 |
| 9 | Մոնիկա և Մանե մանկապարտեզ/Ամանորյա նվեր | 155 | 510 | 79050 |
| 10 | <<Հույսի կամուրջ>>ՀԿ /Ամանորյա նվեր | 31 | 510 | 15810 |
| 11 | <<ՍՕՍ>> մանկական գյուղ /Ամանորյա նվեր | 72 | 510 | 36720 |
| 12 | Մշակույթի տուն /Ամանորյա նվեր | 17 | 510 | 8670 |
| 13 | Ընդամենը | **1945** | 510 | **991950** |
| 14 | Զոհված ազատամարտիկների ընտանիքներ | 39 | 20000 | 780000 |
| 15 | Բացիկ | 350 | 600 | 210000 |
| 16 | Ծրար | 350 | 80 | 28000 |
| 17 | Այլ ծախսեր | | | 180000 |
| 18 | Երևանից հրավիրված երգիչ, երգչուհիների մասնակցությամբ համերգ | | | 2000000 |
| 19 | Հրավառություն | | | 500000 |
| 20 | Տոնածառ/տոնածառի զարդարում | | | 1800000 |
| 21 | Քաղաքի տոնական զարդարում | | | 3014000 |
| 22 | Տրանսպորտային ծախսեր | | | 140000 |
| 23 | Հյուրասիրություն | | | 800000 |
| | Ամբողջը | | | **10443950** |

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevancity@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 55Ն

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի 2018թ բյուջեի եռամսյակային համամասնությունների պահպանման նպատակով անհրաժեշտություն է առաջացել վարչական բյուջեի ծախսային և եկամտային մասում կատարել 17255,0 հազ դրամ կրճատում:
Ելնելով վերոնշյալից և ղեկավարվելով ,,Բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***
1. 2018թ տարեկան բյուջեի եկամտային և ծախսային մասը կրճատել 17255,0 հազ դրամ՝ ա/.եկամտային մասում կրճատել 5155,0 հազ դրամ 7.2 բաժնի 900375121036 հաշվից /գույքահարկ ֆիզ. անձանցից/, 1200,0 հազ դրամ 9.2 բաժնի 900375121028 հաշվից /հողի հարկ/, 500,0 հազ դրամ 16.90 բաժնի 900375121226 հաշվից /ՔԿԱԳ/, 400,0 հազ. դրամ 16.91 բաժնի 900375121069 հաշվից /նոտարական ծառայություն/, 400,0 հազ. դրամ 46.3. բաժնի 900375121341 հաշվից /չափագ. ծառ./, 100,0 հազ. դրամ 46.4 բաժնի 900375121358 հաշվից /մրցույթներ և աճուրդներ/, 2466,0 հազ դրամ 46.7 բաժնի 90037500155 հաշվից /ծնողական վճարներ/, 1000,0 հազ դրամ 22.52 բաժնի 900375121077 հաշվից /հողի վարձակալություն/, 5500,0 հազ դրամ 46.5 բաժնի 900375121499 հաշվից /աղբահանության վճար/, 316,0 հազ.դրամ 31 բաժնի 900375121093 հաշվից /շին. թույլտվություն/, 118,0 հազ. դրամ 38 բաժնի 900375121242 հաշվից /շին. թույլտվություն/, 100,0 հազ. դրամ 50 բաժնի 900375121150 հաշվից / վարչական տույժ/:

բ/ 200,0 հազ. դրամ ավելացնել 15 բաժնի 900375001816 հաշվին /շահումով խաղեր/, 3026,0 հազ. դրամ 46.2 բաժնի 900375121333 հաշվին:

գ/Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել 17255.0 հազ. դրամի կրճատում, այդ թվում՝ Իջևանի համայնքապետարանի պահպանման ծախսերի 1.1.1 բաժնի 4111 հոդվածից կրճատել 2168,0 հազ դրամ, 4211 հոդվածից 32.0 հազ. դրամ 4212 հոդվածից 834,0 հազ դրամ, 4214 հոդվածից 31.0 հազ. դրամ, 4232 հոդվածից 264,0 հազ դրամ, 4241 հոդվածից 350,0 հազ դրամ, 4269 հոդվածից 2143.0 հազ. դրամ, 4237 հոդվածից 27.0 հազ. դրամ, ,,Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն,, բ/հ պահպանման ծախսերի 5.1.1 բաժնի 4111 հոդվածից 1010,0 հազ դրամ, 4215 հոդվածից 50.0 հազ, դրամ, 4234 հոդվածից 90.0 հազ, դրամ, 4261 հոդվածից 180,0 հազ. դրամ, 4269 հոդվածից 1714,0 հազ. դրամ, Մշակույթի տան պահպանման ծախսերից 240.0 հազ. դրամ, թիվ 1 մանկապարտեզից 2630.0 հազ. դրամ, թիվ 8 մանկապարտեզից 1300.0 հազ. դրամ, Թանգարանից՝ 990.0 հազ. դրամ, ,,Վերնատուն,, ՓԲԸ-ից 1834,0

հազ.դրամ, 4.5.1. բաժնի 4251 հոդվածից 4560,0 հազ. դրամ /բարեկարգում/, Ջրամատակարարման ծախսերից 46,0 հազ. դրամ:

Վերոնշյալ գումարներից 1334,0 հազ. դրամ հատկացնել Իջևանի համայնքապետարանի պահպանման ծախսերի 1.1.1 բաժնի 4234 հոդվածից, 600.0 հազ. դրամ 4264 հոդվածին, 745,0 հազ. դրամ 4267 հոդվածին, 160,0 հազ. դրամ հատկացնել ,,Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն,, բ/հ պահպանման ծախսերի 5.1.1 բաժնին 4252 հոդվածին, 1130,0 հազ. դրամ "Իջևանի երաժշտական դպրոց" ՀՈԱԿ-ի, 140.0 հազ. դրամ "Ավանդույթ" ՀՈԱԿ-ի, 100.0 հազ. դրամ Թիվ 5 մանկապարտեզի, 150.0 հազ. դրամ Մարզադպրոցի պահպանման ծախսերին, 593,0 հազ. դրամ, 10.7.1. բաժնի 900372341033 հաշվին, 562,0 հազ. դրամ 4.1.52. բաժնի 900372177023 հաշվին, 950,0 հազ.դրամ 8.4.51. բաժնի 900372221078 հաշվին /մաս. միջ./:

2.Հաստատել 2018թ. ճշգրտված բյուջեն 552671,5 դրամ եկամուտների 553763,3 հազ. դրամ վարչական բյուջեի 66.6 հազ. դրամ ֆոնդային բյուջեի ընդամենը 553829,9 հազ դրամ ծախսերի մասով:
Բյուջեի դիֆիցիտը կազմում է 1158,4 հազ դրամ, որի ծածկմանն է ուղղված 1158,4 հազ. դրամ տարեսկզբի ազատ մնացորդը, այդ թվում 1091,8 հազ դրամ վարչական, 66,6 հազ դրամ ֆոնդային բյուջեի մասով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԷՄԻԼ

ՕՐԴԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ**